Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 6

ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի խորհրդի 2011թ. մարտի 17-ին կայացած թիվ 6 նիստի արձանագրությունից

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2010-11 ուստարվա առկա և հեռակա բաժինների 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
2. Մանկավարժական պրակտիկայի արդյունքների քննարկում:
3. Հակոբ Օշականի ստեղծագործություններին նվիրված գիտական նստաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը:
4. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի առաջին հարցի առիթով ելույթ ունեցավ դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը: Նա մասնավորապես նշեց, որ հիմնականում գոհացուցիչ են քննության արդյունքները, միջին վիճակագրությունը գրեթե նույնն է, չեն նկատվել արտառոց երևույթներ: Պարզապես քննաշրջանը ուներ փոքր-ինչ լարվածություն, 5 ուսանողներ այդպես էլ չկարողացան հաղթահարել լուծարքային քննաշրջանները և համալսարանից դուրս մնացին:

Առաջին հարցի առիթով ելույթ ունեցավ նաև ֆակուլտետի դեկանը: Նա մասնավորապես նկատեց, որ ուսանողները շատ են բողոքում հանձնարարվող գրականության ցանկերի ծավալներից. դրանք հիմնականում ծանրաբեռնված են, և ամբիոնների վարիչներին ուշադրությունը հրավիրվեց ծրագրերի բեռնաթափման վրա: Վերանայման խնդիրը հանձնարարվեց պրոֆ.Վ. Սաֆարյանին: Բացի այդ՝ անհրաժեշտ է քննությունների հարցաշարերի՝ համապատասխան ամբիոններում փակցնելը:

Պրոֆ. Ավագյանը խոսեց նաև այլ թերացումների մասին: Օրինակ՝ որոշ դասախոսներ բավական ուշ են սկսում քննությունները, և դեպքեր են նկատվել, որ նրանք մինչև 21:00-ն մնում են համալսարանում: Դեռևս անկատար է քննական ընթացքի հսկողության մակարդակը, քանի որ օգտագործվում են լսողական բարձր տեխնոլոգիաներ: Հանձնարարեց ամբիոնի վարիչներին, որ վերջինները զգուշացնեն դասախոսներին էլ ավելի ուշադիր լինել քննական տեղեկագրերը լրացնելիս:

Մանկավարժական պրակտիկայի կազմակերպման խնդիրների առիթով ելույթ ունեցավ մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆ. Ն. Հարությունյանը: նա նշեց,

որ ուսանողները գոհ են պրակտիկայից և հետագայում կաշխատեն դպրոցներում: Մանկավարժական պրակտիկան անց է կացվել 16 դպրոցներում, եղել են դասալսումներ, քննարկումներ, կազմակերպվել են զանազան միջոցառումներ /Թումանյանի, Տերյանի մասին/:

Հակոբ Օշականի ստեղծագործություններին նվիրված գիտական նստաշրջանի նախապատրաստական աշխատանքների առիթով Ավագյանը հանձնարարեց, որ յուրաքանչյուր ամբիոնից ներկայացնեն զեկուցումներ:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

1. Հայոց լեզվի ամբիոնի դոցենտ Ա. Ադիլխանյանի «Ոճաբանաության գործնական աշխատանքների ձեռնարկ» մենագրության հրատարակության երաշխավորելու հարցը:
2. Հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ Ռ. Սաղաթելյանի «Բարբառային բառաշերտը արդի արևմտահայերենում» մենագրության հրատարակության երաշխավորելու հարցը:
3. Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասիստենտ Ա. Հայրապետյանի «Ոչ գծային բառաստեղծումը հայերենում» մենագրության հրատարակության երաշխավորելու հարցը:
4. Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասիստենտ Ն. Մկրտչյանի «Հայերեն- լատիներեն բառարանը» մենագրության հրատարակության երաշխավորելու հարցը:
5. Սփյուռքագիտության սմբիոնի վարիչ Յու. Ավետիսյանի «Պաշտոնական ոճ» մենագրության հրատարակության երաշխավորելու հարցը:
6. Ալբերտ Շարուրյանի Պրոֆ. Ալբերտ Շարուրյանի «Գրիգոր Զոհրապի կյանքի և գործունեության տարեգրություն» աշխատության վերահրատարակության երաշխավորելու հարցը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ